

ԷՖԹԱՆԱԶԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԻՑ

Սերգեյ Բարխուդարյան

*ՀՊՄՀ-ի քաղաքագիտության և իրավունքի պայմանության ամբիոնի
դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Տվյալ հոդվածում վերլուծության է ենթարկվում էֆթանա-
զիայի ինստիտուտի էությունն ու բովանդակությունը իրա-
վական, կրոնական, փիլիսոփայական և բժշկական տեսանկ-
յուններից: Հեղինակը վերլուծում է տվյալ բնագավառում
տարբեր պետությունների օրենսդրական մոտեցումները:
Արդյունքում՝ իրավահամեմատական վերլուծության, վիճա-
կագրության և դատական պրակտիկայի ուսումնասիրման
հիման վրա հեղինակն առաջարկում է էֆթանազիայի հիմ-
նախնդրին վերաբերող մի շարք հարցերի շուրջ իր սեփական
տեսակետը:

Հիմնաբառեր. էֆթանազիա, վնաս հասցնելը, կարեկ-
ցանքի շարժառիթ, օրինականացում, սպանություն, բարոյա-
կանություն:

«Էֆթանազիա» եզրույթը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել
անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը, որը բառիս բուն իմաստով նշա-
նակում է «լավ, թեթև մահ» (հունարեն eu-լավ և thenet-մահ):

Էֆթանազիայի հիմնախնդիրը կարելի է դիտարկել մի քանի տեսանկ-
յուններից՝ փիլիսոփայական, սոցիալական, բժշկական, բարոյական, իրա-
վական և այլն: Այդ հիմնախնդրի քննարկումը առանձնապես կարևոր է
բարոյա-էթիկական տեսանկյունից: Երբ հարց է առաջանում էֆթանազիայի
օրինականացման մասին, ապա դրա էությունը հանգեցնում է մեկ այլ
հարցի՝ էֆթանազիան գթասրտության սկտ է, թե՞ կյանքի դեմ ուղղված
հանցագործություն՝ սպանություն: Սակայն, հաշվի առնելով հասարակու-
թյան և պետության զարգացման ժամանակակից փուլում տնտեսական և
սոցիալական բնույթի մի շարք խնդիրների առկայությունը, միգուցե դեռ

վաղ է խոսել էֆթանագիայի օրինականացման մասին: Սակայն մի բան ակնհայտ է. անկախ տվյալ հիմնախնդրի դրական կամ բացասական լուծումից, այն չի վերացնի էֆթանագիայի արգելքի իրավական ամրագրման կամ էլ դրա կիրառման անհրաժեշտությունը:

Էֆթանագիայի հիմնախնդրի վերաբերյալ կրոնական հայացքները բարոյա-էթիկական առումով միանշանակ չեն: Այսպես, քրիստոնեական հավատքի տեսանկյունից ինքնասպանությունը համարվում է ծանր մեղք, քանզի կյանքը մեծ արժեք է, որքան էլ որ այն ծանր լինի: Բուդդայականությունը, ընդհակառակը՝ կյանքից հեռանալը ինքնըստինքյան համարում է «օրինակելի»: Ինքնասպանությունը բուդդայական մշակույթում կրոնական ծիսակատարության տեսակ է, և դա զարմանալի չէ, քանզի կյանքի բարձրագույն երանությունը և ցանկալի նպատակը գտնվում է այդ կյանքից դուրս՝ «չգոյության մեջ»: Առանձին ակտերում «թեթև մահ» ասելով ենթադրվում էր «կանխամտածված սպանություն այնպիսի մեթոդի օգնությամբ, որը առավել քիչ ցավ ու տանջանք էր պատճառում՝ կատարվելով «կարեկցանքից», կարևորվում է անտանելի տանջանքներին վերջ դնելու կամ էլ կյանքի դժվարություններից խուսափելու նպատակով, որը համարվում է «անմարդկային», «ոչ արժանի հենց մարդու համար»¹: Միևնույն ժամանակ ինքնասպանությունը կամ ցավագրկող թերապիայի արդյունքում մահը կրոնը դիտարկում է որպես ծանր մեղք, բարձրագույն ուժի նկատմամբ անհավատության ապացույց:

Բժշկական տեսանկյունից հիմնախնդիրն առաջին հերթին կայանում է այն հիվանդների թվի սահմանման մեջ, որոնց նկատմամբ հնարավոր է կիրառել էֆթանագիա: Անկասկած, էֆթանագիան պետք է սահմանափակվի, և դրա կիրառումը հնարավոր լինի միայն այն հիվանդների համար, որոնք կրում են ծանր ֆիզիկական և բարոյական տառապանքներ, երբ արդեն հույս չկա, որ մարդը կապրի, և դա հաստատվել է բժշկական փորձագիտական եզրակացությամբ: Նման մոտեցումը անհրաժեշտ է բժշկական սխալներից զերծ մնալու համար: Էֆթանագիայի կիրառման կարևոր պայման պետք է հանդիսանա հիվանդի խնդրանքը: Իսկ այն դեպքերում, երբ հիվանդի ֆիզիկական տանջանքներն անցողիկ են և կարող են վերացվել համապատասխան բժշկական միջոցների կիրառմամբ, դա ընդհանրապես քննության առարկա չպետք է դառնա: Հիվանդների մյուս խումբը, նրանք են, ովքեր գտնվում են կայուն հիվանդության աճման վիճակում: Նման իրավիճակում հարցի բժշկական կողմն առնչվում է հիվանդության ծանրությունը սահմանելու խնդրի հետ, թե որքանով է այն բուժելի, բուժման ընթացքում այն հասնի է եզրագծին, բոլոր հնարավոր բժշկական միջոցները սպառվել են, և հաստատվել է կայուն, աճող վիճակի անշրջելիություն²: Բժշկական տեսանկյունից էֆթանագիայի հարցի հետ կապված հիվանդի վիճակի որոշման հարցում առանձնակի վիճահարույց հարցեր չեն առաջա-

1 Stn Декларация об эфтаназии от 5мая 1980г./Конгрегация вероучения. СПб., 2002:

2 Stn Миллард Д.У. Эфтаназия: Дебаты в Британии // Социальная и клиническая психиатрия 1996 N4, էջ 107-109:

նում, բայց միշտ կասկածներ կան այն հարցում, թե արդյոք էֆթանագիայի գաղափարը չի հակասում հենց բժշկական մասնագիտության էությանը, որը կոչված է պահպանելու, այլ ոչ թե կործանելու մարդու կյանքը:

Էֆթանագիայի օրինականացման միտումների հետ կապված վիճահարույց խնդիր է դարձել իրավական տեսանկյունից դրա սահմանումը: Տվյալ համատեքստում էֆթանագիան այն արարքների թվին է դասվում, որոնք արգելված են օրենքով և քրեական պատասխանատվություն են առաջացնում: Էֆթանագիայի համար քրեական պատասխանատվության հիմնախնդիրը սերտորեն կապված է դրա որակավորման ձևերի հետ: ՀՀ և մի շարք երկրների օրենսդրական նորմերը, ինչպես նաև միջազգային-իրավական փաստաթղթերը, որպես կանոն, էֆթանագիայի իրականացման արգելք են պարունակում առաջին հերթին դրա ակտիվ ձևի համար: Նմանատիպ արգելքներ հանդիպում են նաև միջազգային բժշկական փաստաթղթերում, որոնք էթիկական բնույթ են կրում: Չնայած դրան, էֆթանագիան օրինականացվում և ամրագրում է ստանում մի շարք երկրների օրենքներում: Հարց է առաջանում, թե որքանով է նման օրենսդրական որոշումը համապատասխանում մարդու կյանքի իրավունքի համընդհանուր ճանաչմանը: Հետևաբար էֆթանագիայի և դրա համար իրավաբանական պատասխանատվության հետ կապված խնդիրները պետք է քննարկման առարկա դառնան կյանքի իրավունքի համատեքստում, որը դասվում է մարդու անձնական հիմնական իրավունքների թվին: Կյանքի իրավունքը մարդու բնական և անօտարելի իրավունքն է: Այն երաշխավորում է մարդու գոյությունը որպես կենսաբանական էակի և հասարակական հարաբերությունների սուբյեկտի: Այն ունի բարդ կառուցվածք, որի հիմնական տարրերից մեկը պետք է դիտարկել իր կյանքը ազատ տնօրինելու իրավունքը: Դա նշանակում է, որ ոչ ոք՝ ոչ պետությունը, ոչ էլ քաղաքացիները, չեն կարող կամայականորեն մարդուն զրկել կյանքից: Մարդու կյանքի իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք: Իսկ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածը կյանքի իրավունքը դիտարկում է որպես յուրաքանչյուր մարդու անբաժանելի իրավունք:

Մարդու կյանքի իրավունքն առանձնահատուկ տեղ է գրավում քրեաիրավական պաշտպանության օբյեկտների շարքում: ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածում նշվում է, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Կյանքի իրավունքի հետ առնչվում է նաև մեկ այլ իրողություն, որը, ինչպես նշվեց վերը, անվանում են էֆթանագիա, այսինքն՝ կյանքից կամովին հեռանալը, որտեղ մարդու կյանքի հետ առնչվում է նաև մարդու անհատական ինքնորոշման իրավունքը, որն իր մեջ ներառում է սեփական կյանքն ավարտելու միջոցներն ու ձևերը: Այնուամենայնիվ կարծում ենք, որ տվյալ իրավունքը չպետք է քննարկել առավել լայն իմաստով. այն չի կարող իր

մեջ ընդգրկել մահվան իրավունքը, որն արդարացման հիմքեր չունի: Սահմանելով մահը բժիշկները, կենսաբանները, իրավաբանները ուշադրությունն ուղղում են այն չափանիշների բացահայտմանը, որոնք հնարավորություն են տալիս ամրագրել ֆիզիկական-մարմնային մահվան փաստը: Գիտական հայտնագործությունները, առանց կասկածի, պետք է հաշվի առնվեն գործող իրավական ակտերի կատարելագործման ժամանակ, իսկ բժշկությունը և իրավագիտությունը չպետք է հակադրվեն միմյանց:

Էֆթանազիան ընդհանուր առմամբ կարելի է բնութագրել որպես բժշկական աշխատողի դիտավորյալ գործողություններ, որոնք իրականացվում են տեղեկացված հիվանդի կամ նրա օրինական ներկայացուցչի ակնհայտ և ոչ երկմտելի արտահայտված ցանկությանը համապատասխան՝ նպատակ ունենալով վերջ դնել հիվանդի կյանքին վտանգ սպառնացող ֆիզիկական և հոգեկան տանջանքներին, որպես մահվան անդառնալի գործոն: «Տեղեկացված հիվանդ» բառը, որ օգտագործվում է առողջական բնագավառի միջազգային-իրավական փաստաթղթերում, նշանակում է, որ հաճախորդը տեղեկացված է իր առողջության վիճակի, ախտորոշման, հիվանդության զարգացման կանխագուշակման, այս կամ այն բուժման կամ էլ դրանից հրաժարվելու հետևանքների մասին:

Էֆթանազիայի կողմնակիցները շատ դեպքերում իրենց տեսակետը հիմնավորում են՝ հղում կատարելով «բնական», «անօտարելի», «սահմանադրական», «սուբյեկտիվ իրավունքներ» և այլ հասկացությունների վրա: Այսպես, էֆթանազիայի ռուսական հետազոտողներ Յու. Դմիտրիևը և Ե. Շլենևան նշում են, որ «սահմանադրությամբ սահմանված կյանքի իրավունքը տրամաբանորեն նշանակում է նաև մարդու մահվան իրավունքի իրավաբանական ամրագրում»¹: Նրանք գտնում են. «Քանի որ կյանքի իրավունքը վերաբերում է մարդու անձնական իրավունքների թվին, ապա դրա իրագործումը նրանց կողմից իրականացվում է անհատապես և ինքնուրույն, անկախ այլ անձանց կամքից»²: Շարունակելով այդ միտքը՝ նրանք եզրակացնում են, որ այլ անձանց միջամտությունը մարդու կողմից կյանքի և մահվան հարցի որոշման հետ կապված իրավաբանորեն անթույլատրելի պետք է ճանաչել: Կյանքի իրավունքը հեղինակների պնդմամբ, ենթադրում է մարդու հնարավորությունն ինքնուրույն տնօրինելու իր կյանքը, այդ թվում՝ բարի կամքով կյանքից հեռանալու ժամկետների և եղանակների մասին որոշումներ ընդունելու³: Նման տեսակետ է արտահայտում նաև Է. Դյուրկեյմը, ըստ որի «մարդու կյանքի իրավունքի ճանաչումը նշանակում է նաև նրա մահվան իրավունքի ճանաչումը»⁴: Այդ առումով գրականության մեջ, ինչպես նաև լրատվության միջոցներով, առավել հաճախ շրջանառվում են ոչ այնքան կյանքի իրավունքի, որքան մահվան իրավունքի հետ կապված

1 Дмитриев Ю.А., Шленева Е.В. Право человека в Российской Федерации на осуществление эфтаназии // Государство и право 2000, №11, էջ 52:

2 Նույն տեղում, էջ 52

3 Տե՛ս նույն տեղում, էջ 53

4 Дюркгейм Э. Самоубийство Социологический этюд. М.1994 ,էջ 327

հարցերը: Մի շարք գիտնականներ ենթադրում են, որ «մահվան իրավունքի» ձևակերպումը, որն օգտագործվում է արտասահմանյան երկրների օրենսդրության մեջ, անհաջող է, քանզի եթե հարցը վերաբերում է մահվան տիրապետման իրավունքին, ապա հիվանդը համառորեն պնդելու է, որ իր ցանկությունը կատարվի երրորդ անձի կողմից, որը փաստորեն լեգալացնում (օրինականացնում) է սպանությունը կարեկցանքի շարժառիթով, իսկ դա իր հերթին կարող է չարաշահումների առիթ հանդիսանալ (օրինակ՝ ժառանգություն ստանալու խոչընդոտների վերացման համար և այլն): Այս առումով արժանի է ուշադրության Ն. Կոնիվայի կարծիքը, որն առաջարկում է օգտագործել «մարդու իրավունքը արժանավորեն մահանալու» արտահայտությունը¹: Այս համատեքստում կարելի է մեջբերել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի 2002թ. ապրիլ ամսին կայացրած որոշումը, որը մերժեց Մեծ Բրիտանիայի հպատակ Դիաննա Պրետտիին իրավունքից՝ ընդունելու մահը իր ամուսնու ձեռքերից: Ստրասբուրգի դատավորները եկան այն եզրակացության, որ կյանքի իրավունքը, որը հռչակված է մարդու իրավունքների և հիմնական ազատությունների վերաբերյալ կոնվենցիայի 2-րդ հոդվածում, չպետք է մեկնաբանվի հակառակ իմաստով՝ որպես մահվան իրավունք²: Ինչպես նշում են հետազոտողները, սկսած 20-րդ դարի 60-ական թվականներից՝ «Էֆթանագիա եզրույթի մեկաբանումը տարբերակվում է ծայրահեղ հակասություններով»³:

Տեսության մեջ տարբերակում են պասիվ և ակտիվ էֆթանագիան: Պասիվ էֆթանագիան ստացել է «հետաձգված ասեղի մեթոդ», իսկ ակտիվ էֆթանագիան՝ «լցված ասեղի մեթոդ» անվանումը: Դրանց տարբերությունը կայանում է նրանում, որ դա բժշկի գործողությամբ կամ անգործությամբ է կատարվում: Պասիվ էֆթանագիայի դեպքում բժիշկը դադարեցնում է այն գործողությունները, որի նպատակը հիվանդի կյանքը երկարացնելն էր, քանի որ դա անօգուտ և անիմաստ է համարում (օրինակ՝ արհեստական շնչառության սարքը անջատելը): Ակտիվ էֆթանագիայի դեպքում հիվանդի ցանկությամբ բժշկի կողմից կատարվող գործողությունների շնորհիվ արագացվում է նրա մահվան ընթացքը:

Էֆթանագիայի կարևոր առանձնահատկություններից մեկը այն է, որ դա կատարվում է բարի կամքով, հիվանդի ակնհայտ հաստատուն արտահայտված ցանկությամբ, այն ժամանակ երբ սպանությունը ենթադրում է տուժողի անձի նկատմամբ բռնի ուժի գործադրում: Սպանության սուբյեկտն ընդհանուր է, այսինքն՝ ֆիզիկական, մեղսունակ անձ, որը հասել է քրեական օրենսգրքով նախատեսված համապատասխան տարիքի այն ժամանակ, երբ էֆթանագիայի սուբյեկտը հատուկ է: Այն դեպքերում, երբ անհույս

1 Крылова Н.В. Эвтаназия : уголовно-правовой аспект //Вестник Московского университета. Серия // Право.2000, էջ 20.

2 Туманов В.А, Энтин В.М. Комментарий к конвенцию о защите прав человека и основных свобод и практика ее применения. М.Норма.-2002., 22-23 էջեր.

3 Дмитриев Ю. А. Право человека в РФ на осуществлении эвтаназии // Государство и право-2000., N11, էջ 55.

հիվանդ մարդուն կյանքից զրկելը, անգամ նրա համառ ցանկությամբ կատարվում է անձի կողմից, ի տարբերություն բժշկի, չի կարող դիտարկվել որպես էֆթանագիա և պետք է որակավորվի որպես սովորական սպանություն:

Անհրաժեշտ է նշել, որ տարբեր պետություններում էֆթանագիայի վերաբերյալ հարցը լուծվում է տարբեր կերպ: Ռուսաստանում էֆթանագիայի ճանաչման հարցը վերջին տարիներին քննարկման առարկա է դարձել փիլիսոփաների, բժիշկների և իրավաբանների կողմից, որը երբեմն վերածվում է թեժ բանավեճերի: ՌԴ քրեական օրենսգրքում չկա հատուկ նորմ էֆթանագիայի համար պատասխանատվություն սահմանելու համար: Քրեական օրենքով այն համարվում է որպես սովորական սպանություն՝ պատասխանատվություն սահմանելով ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածով: Իսկ քաղաքացիների առողջության պահպանության մասին ՌԴ օրենսդրության հիմունքների 45-րդ հոդվածում խոսվում է այն մասին, որ բժշկական անձնակազմին արգելվում է էֆթանագիայի իրականացում, այսինքն հիվանդի խնդրանքի բավարարումը՝ կապված նրա մահվան արագացման հետ որևէ գործողություններով կամ միջոցներով, այդ թվում կյանքի պահպանման արհեստական միջոցների դադարեցմամբ: Հիշյալ հոդվածը նախատեսում է, որ եթե անձը հիվանդի մոտ էֆթանագիայի ցանկություն է առաջացնում և այն իրականացնում է, ապա քրեական պատասխանատվություն է կրում ՌԴ օրենսդրությանը համապատասխան: Դրա հետ մեկտեղ նույն օրենսդրության հիմունքների 33-րդ հոդվածը սահմանում է քաղաքացու կամ նրա օրինական ներկայացուցչի իրավունքը՝ հրաժարվել բժշկական միջամտությունից կամ էլ պահանջել դրա դադարեցում: Տվյալ դեպքում հիվանդին կամ նրա ներկայացուցչին բացատրվում է նման մերժման հետևանքները: Հրաժարումը նույնպես պետք է ամրագրվի բժշկական փաստաթղթում, ստորագրվի հիվանդի կամ նրա ներկայացուցչի և բժշկական աշխատողի կողմից: Բժշկական միջամտությունից քաղաքացին կարող է հրաժարվել ցանկացած դեպքում, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են օրենսդրության հիմունքների 34-րդ հոդվածում: Տվյալ հոդվածը նախատեսում է դեպքերի սպառիչ ցանկ, երբ քաղաքացուն կարող է բժշկական օգնություն ցուցաբերվել առանց նրա համաձայնության: Օրենքում նշված կանոնների միջև եղած հակասությունը հնարավորություն է տալիս փաստել, որ ՌԴ-ում լեգալացվել է պասիվ էֆթանագիան՝ իրականացվելով անհրաժեշտ բժշկական օգնությունից հրաժարվելու ճանապարհով, կամ էլ կյանքի կենսասպահովման միջոցները դադարեցնելով, ինչի արդյունքում առաջանում է մահը՝ որպես օրգանիզմում տեղի ունեցող պաթոլոգիական, անշրջելի պրոցեսների զարգացման արդյունք: Նշված դրույթների վերլուծությունից ելնելով՝ կարելի է փաստել, որ էֆթանագիա իրականացնող անձի պատասխանատվությունը տարատեսակվում է կախված դրա ձևից. ակտիվը քրեական պատասխանատվության է բերում, իսկ պասիվն ազատում է որևէ բացասական հետևանքներից:

Էֆթանագիայի որակավորման հետ կապված հիմնախնդիրը գործնականորեն գոյություն ունի աշխարհի բոլոր երկրներում: Պետությունների ճնշող մեծամասնության օրենսդրությունը բացասաբար է վերաբերվում էֆթանագիային՝ այն դիտարկելով որպես սպանություն, այսինքն՝ մարդուն դիտավորյալ կյանքից զրկել:

Ճանաչելով յուրաքանչյուր մարդու կյանքի անվիճելի արժեքը, նրա ազատությունը և արժանապատվությունը, որպես անձի զուտ անձնական հատկություն՝ չի կարելի բացառել, որ էֆթանագիան մնում է որպես դիտավորյալ արարք՝ ուղղված անհույս հիվանդ մարդկանց մեռցնելուն, և այդ որակով իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան սպանության հատուկ ձև: Հենց իրավունքը պետք է պահպանի մարդու կյանքը մինչ վերջին պահը: Այս ամենի հետ մեկտեղ էֆթանագիայի՝ որպես գոյություն ունեցող երևույթի առանձնահատկությունները հնարավորություն չեն տալիս այն նույնականացնել սպանության հետ: Կարելի է մտածել, որ դրանով իսկ խախտվում է քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը՝ արդարության սկզբունքը, որի պահանջն է, որ պատիժը և քրեաիրավական բնույթի այլ միջոցները, որոնք կիրառվել են հանցագործություն կատարած անձի նկատմամբ, համապատասխանեն հանցագործության բնույթին և հանրային վտանգավորության աստիճանին, դրա կատարման հանգամանքներին և մեղավորի անձին: Դա պայմանավորված է էֆթանագիան որպես սպանության առավել նվազ վտանգավոր տեսակ (մեղմացուցիչ հանգամանքներով) առանձնացնելու անհրաժեշտությամբ և քրեական օրենսգրքում հատուկ հոդվածի լրացումով (արտոնյալ բնույթի), որում օրենսդիրը էֆթանագիայի համար քրեական սահմանումից զատ այն կտարբերակեր՝ կախված իրականացման ձևից: Իսկ նման նորմի ընդունումը հնարավորություն կտար խուսափելու երկու վտանգավոր ծայրահեղություններից՝ էֆթանագիայի ապաքրեականացումից և դրա տարբերակումը սպանությունից:

Ըստ վիճակագրական տվյալների՝ այն երկրներում, որտեղ էֆթանագիան արգելված է, և էֆթանագիայի անիրավաչափ կիրառման վերաբերյալ չկա օրինական պաշտպանություն, իրավիճակը տվյալ բնագավառում առավել վատ է: Չնայած էֆթանագիան արգելող օրենքների ընդունմանը՝ դրա կիրառման դեպքերը ավելի հաճախակի են դարձել: Այսպես, ՄԱԿ –ի բժշկական գծով նախկին տնօրեն՝ Մայքլ Գորվիլը խոստովանել է, որ օգնել է այս կյանքից հեռանալու իր հիսուն հիվանդներին¹: Ցեզարը ասում էր. «Ավել լավ է մեռնել, քան ապրել մահվան սպասումով»²: Ելնելով վերը նշվածից՝ կարելի է եզրակացնել, որ էֆթանագիայի համարժեք իրավական կարգավորումը առավել օգտակար է, որն ընդունակ է հարթեցնել քննարկվող ընթացակարգի հակասությունները և քրեածին դրսևորումները: Այնուամենայնիվ, այն հարցին, թե որն է լավ՝ մշտական տանջանքներով և տառապանքներով լի կյանքը, թե անցավ մահը, մինչ այսօր դեռևս չի տրվել

1 Кузе.Х. Международный медицинский журнал. 1998.

2 Цезарь Ю. Разделяй и властвуй: Записки триумфатора. М.,2012

միանշանակ վերջնական պատասխան: Էֆթանագիայի հիմնախնդրի վերաբերյալ շարունակում են բաց մնալ հետևյալ հարցերը. արդյոք կյանքի իրավունքը պետք է դիտել որպես սպրեյու մարդու պարտականություն և հնարավոր է արդյոք այդ իրավունքից նրա կամավոր հրաժարումը: Հավանաբար նշված հանգամանքները հանգեցրին նրան, որ 20-րդ դարի վերջերին աշխարհի մի շարք երկրներում ընդունվեցին օրենքներ, որոնք թույլ տվեցին գործունակ քաղաքացիներին կազմելու այսպես կոչված «կյանքի վերաբերյալ կտակներ», որոնցով բժիշկները լիազորվում և հրահանգվում են հրաժարվել կենսաապահովման արհեստական համակարգի կիրառումից, եթե այդ անհատները պետք է տառապեն ծանր անբուժելի հիվանդությամբ: Նշված օրենքներով ըստ էության օրինականացվեց էֆթանագիան: Հարկ է նշել, որ էֆթանագիայի կիրառումը տարբեր երկրներում տարբեր կերպ է լուծվում: Այսպես, Հոլանդիայի քրեական օրենսգրքով էֆթանագիան օրինականացվեց 2002թ. ապրիլի 1-ից, ոչ միայն փաստացի, այլ նաև իրավաբանորեն: Կամավոր էֆթանագիան օրինականացվեց Բելգիայում, այնուհետև՝ Լյուքսեմբուրգում¹: Գերմանիայի օրենսդրությունը պատասխանատվություն է սահմանում սպանության համար, երբ այն կատարվել է տուժողի խնդրանքով²: Ֆրասիայի օրենսդրությունը հակված է էֆթանագիան դիտարկել որպես սպանության տեսակ ծանրացնող հանգամանքներով³:

ՀՀ օրենսդրությամբ էֆթանագիան նույնպես քրեորեն պատժելի արարք է համարվում: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996թ. ընդունված ՀՀ օրենքի 23 հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էֆթանագիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցներով: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էֆթանագիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»: ՀՀ քրեական օրենսդրությունն էլ նման դեպքերում պատասխանատվություն է նախատեսում քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի առաջին մասով:

Կարծում ենք, որ քրեական օրենքի միատեսակ մեկնաբանման և կիրառման, հավասարության, մարդասիրության և արդարության սկզբունքների իրագործման և հիմնավորված պատիժներ նշանակելու նպատակով ավելի նպատակահարմար է քրեական օրենսգրքի մեջ մտցնել լրացուցիչ արտոնյալ կազմ «սպանություն կարեկցանքի շարժառիթով»: Դա հնարավորություն կտա հրաժարվել «էֆթանագիա» եզրույթի շահարկումից՝ դրա բովանդակության հասկացության վերաբերյալ ոչ միանշանակ մոտեցումների փաստի ուժով: Մյուս դեպքում էֆթանագիայի օրինականացումը մանրակրկիտ ուսումնասիրման կարիք ունի: Այն պահանջում է զգույշ,

1 Вольный В., Крук Д. Эвтаназия- за и против // Проблемы медицины. 2000, N 3(17) էջ 55

2 Квернадзе Р. А. Некоторые аспекты становления и развития законодательства в области здравоохранения // Государство и право, 2001, N 8, էջ 99

3 Уголовное право зарубежных стран. Под. ред. Н. Е Крыловой. М.ЮРАЙТ 2015, էջ 785

մտածված, հավասարակշռված մոտեցում և հստակ մշակված օրենսդրություն: Իսկ օրենսդրական որոշումների ընդունմանը պետք է նախորդի հասարակական կարծիքի համընդհանուր ուսումնասիրումը, տարբեր սոցիալական շերտերի և խմբերի կարծիքները, որը շատ բարդ և հրատապ պահանջ է, քանի որ այն շոշափում է ողջ հասարակության կենսական շահերը:

ПРАВОВЫЕ И ИНЫЕ АСПЕКТЫ ОЦЕНКИ ПРОБЛЕМ ЭВТАНАЗИИ

Сергей Бархударян

Преподаватель кафедры политологии и права Армянского государственного педагогического университета, кандидат юридических наук, доцент

В данной статье анализируется сущность и содержание института эвтаназии с учетом правовых, религиозных, философских и медицинских аспектов. Автор анализирует законодательный подход различных государств к данной области. В результате на основе сравнительно – правового анализа изучения статистики и судебной практики предлагает собственные позиции по кругу вопросов, относящихся к проблеме эвтаназии.

Ключевые слова: эвтаназия, причинение вреда, мотив сострадания, легализация, убийство, мораль.

EVALUATION ISSUES OF LEGAL AND OTHER ASPECTS OF EUTHANASIA

Sergey Barkhudaryan

*Lecturer at Political and Legal History Department
at Armenian State Pedagogical University, PhD in Law, Associate professor*

In this article the author analyses the essence and content of the institute of euthanasia with provision for legal, religious, philosophical and medical aspects. The author examines the legislative approach of various states in this area. And on the basis of comparative legal analysis the study of statistics and jurisprudence offers his own position on the issues concerning the problem of euthanasia.

Key words: euthanasia, injury, the motive of compassion, legalization, murder, morality.